Արձանագրություն N 3
Протокол N 3

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի
Внеочередное заседание оценочной комиссии под кодом «EQ-BMAPDzB-21/5»

ք. Երևան 12.01.2021թ.
Ժամը 10:00
г. Ереван 12.01.2021г.
10:00ч.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբինյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Չարխիֆալաքյանը, Տ. Սարգսյանը, Ս Բաղդասարյանը.
Բացակայում է Ա. Խառատյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

Участвовали
Председатель комиссии К. Бабинян
Члены комисии А. Чархифалакян, Т. Саргсян, , С. Багдасарян
Отсутствует А. Харатян
Секретарь комисии: Г. Мурадян

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 11.01.2021 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ**
Ответ на разъяснение по запросу поданного 11.01.2021 в рамках закупочной процедуры под кодом «EQ-BMAPDzB-21/5»

(Կ. Բաբինյան
К. Бабинян)

Պարզաբանման պահանջի տեքստ
Текст запроса для разъяснения

Հարցումը ներկայացված է կից գրություններում
Запросы представлены в прикрепленном тексте

Պարզաբանում տրամադրելու տեքստ.
Текст разъяснения

1. Նոր կորոնավիրուսային հիվանդության ժամանակ ռենտգեն հետազոտությունների իրականացումը առաջնային է և շատ կարևոր է հիվանդության հայտնաբերման, բուժման ընթացքի և հետագա բարդությունների կանխարգելման նպատակով: Հաշվի առնելով վերագրյալը և հիվանդության տարածվածությունը՝ նպատակահարմար է գտնվել սահմանել սարքավորումների ձեռքբերման հնարավորինս կարճ ժամկետ՝ չխախտելով գնումների օրենդրության պահանջները: Նշված պարագայում հաշվի առնվել նաև ռենտգեն սարքերի մոնտաժման և գոնծարկման ժամանակահատվածը, որը նույնպես տևական ժամանակ է պահանջում:

Միաժամանակ՝ Ուլտրաձայնային հետազոտության սարքերը նույնպես շատ կարևոր են առանձին հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով, և ծրագրի շրջանակներում նախատեսվում է տրամադրել այն բուժհաստատություններին, որտեղ առաջնահերթ է նշված սարքերի պահանջարկը: Հաշվի առնելով վերոգրյալը և հիվանդության տարածվածությունը՝ նպատակահարմար է գտնվել սահմանել սարքավորումների ձեռքբերման հնարավորինս կարճ ժամկետ՝ չխախտելով գնումների օրենդրության պահանջները:

Միաժամանակ՝ պայմանագրի նախագծի 8.8 կետի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ վաճառողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվում է մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ մատակարարման հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում մատակարարի պահանջով կդիտարկվի նաև ժամկետը ևս 30 օրացուցային օրով երկարաձգելու հարցը:

2. «Գնումների մասին» օրենքի 35-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ մրցույթի արդյունքներով ընտրված մասնակիցը պարտավորվում է ներկայացնել պայմանագրի ապահովում վերջինիս գնային առաջարկի 10% տոկոսի չափով և որակավորման ապահովում գնային առաջարկի 100% տոկոսի չափով, եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, ապա վերջինս պարտավորվում է հիշյալ ապահովումները ներկայացնել բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:
Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ «մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:»

Կարգի 32-րդ կետի 26-րդ ենթակետի համաձայն՝ «սույն կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված ապահովումը այն ներկայացնողին վերադարձվում է *պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից* ***ամբողջական ընդունվելուն*** *հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում..*»
Կարգի 32-րդ կետի 27-րդ ենթակետի համաձայն՝ «պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ *վերջինիս կողմից պայմանագրով սպանձնված պարտավորությունների* ***ամբողջական*** *կատարման դեպքում.*»:

Հրավերի Հավելված 6-ի՝ պայմանագրի նախագծի 4.2 կետի համաձայն՝ «Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն (1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով) ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օրը, իսկ (4-ից-8-րդ չափաբաժինների մասով) ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները»:

Վերոգրյալով պայմանավորված՝ հարկ է նկատի ունենալ, որ պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած մատակարարված ապրանքի թերությունների վերաբերյալ վաճառողի կողմից իրականացվող գործողությունները պայմանագրով ստանձնած պարտավորություն է, իսկ պայմանագրի ամբողջական կատարումն իրենից ենթադրում է դրանով ստանձնած բոլոր պարտավորությունների ողջ ծավալով (**ամբողջական**) կատարում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:
Принято решение: за - 4, против - 0.

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.

Հանձնաժողովի Комиссии		
Նախագահ՝ Председатель		Կ. Բաբինյան К. Бабинян
Անդամներ՝ Члены		Ա. Չարխիֆալաքյան А. Чархифалакян
		Տ. Սարգսյան Т. Саргсян
		Ս Բաղդասարյան С. Багдасарян
Քարտուղար՝ Секретарь		Գ. Մուրադյան Г. Мурадян